Հավելված
Ջերմուկ համայնքի ղեկավարի
2024 թվականի հունվարի 22-ի N 20-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման մրցութային հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման բաց մրցույթ

Հայտարարվում է բաց մրցույթ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող՝ ստորև ներկայացվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով՝

1/ կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0284-0016, մակերեսը՝ 0,51816 հա, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ արոտավայր, վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու (որպես արոտավայր) համար, վարձակալության տրամադրման ժամկետը՝ 10 տարի,

2/ կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0284-0015, մակերեսը՝ 0,51631 հա, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ արոտավայր, վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու (որպես արոտավայր) համար, վարձակալության տրամադրման ժամկետը՝ 10 տարի։

Մրցույթները կկայանան *2024 թվականի փետրվարի 26-ին, ժամը 11.00–ին*, Ջերմուկի համայնքապետարանում՝ ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8 հասցեում։ Հողամասերի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 30 000 (երեսուն հազար) դրամ է։

Նշված հողամասում չկան ճանապարհներ, ջրատար, գազատար, կոյուղու խողովակաշարեր և էլեկտրահաղորդման գծեր, սերվիտուտներ։ Հողակադաստրային շրջանը՝ Վեդի Ներքին-Արփա, հողատեսքերի գնահատման խումբը՝ 5։ Վարձակալողը պարտավոր է հողամասում իրականացնել բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումներ և ապահովել ագրոտեխնիկական պահանջները։

Մրցույթի մասնակցության վճարը 10 000 դրամ է, որն անկախ մրցույթի արդյունքներից՝ ետ չի վերադարձվում: Նախավճարի չափը՝ մեկնարկային վճարի 5%-ը, որը մրցույթի մասնակիցները մուծում են մրցույթի անցկացման օրը՝ մինչև մրցույթի մեկնարկը։ Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել մասնակցության հայտ՝ կցելով անձնագրի պատճեն (եթե ֆիզիկական անձ է) կամ հիմնադիր փաստաթղթերը (եթե ընկերություն է) և մասնակցության վճարի անդորագիրը: Հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 (երեք) աշխատանքային օր առաջ։ Մրցույթում հաղթող կճանաչվի այն մասնակիցը, ով կառաջարկի առավելագույն վարձավճար և հողամասի արդյունավետ օգտագործման լավագույն պայմաններ։ Մրցույթում հաղթած անձը և հանձնաժողովը՝ ի դեմս նախագահի, մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը ։ Մրցույթում հաղթած անձն արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում կորցնում է մուծած նախավճարը և զրկվում է մրցույթը չկայանալու պարագայում հողամասն առանց մրցույթի վարձակալելու իրավունքից։ Վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագրի և հողամասի հատակագծի նախագծերին կարելի է ծանոթանալ տեղում, այլ պայմանների ծանոթանալու համար կարելի է զանգահարել 028721217 կամ 060747077 հեռախոսահամարներով։

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ